ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Ա-ԹիՎի» հեռուստաընկերության և մի խումբ քաղաքացիների դեմ՝ ՀՀ քաղաքացի Էմմա Կիրակոսյանի դատական հայցի վերաբերյալ

(Ի լրումն նույն հայցի կապակցությամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքի)

Դիտորդ մարմնի կազմը՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

2020թ. նոյեմբերի 2-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Տեղեկատվական վեճերի խորհուրդը՝ ուսումնասիրելու վերջինիս 2020թ. սեպտեմբերի 25-ի կարծիքը, որը կայացվել է «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության և մի խումբ քաղաքացիների դեմ ՀՀ քաղաքացի Էմմա Կիրակոսյանի ներկայացրած դատական հայցի կապակցությամբ: ՏՎԽ-ն առաջարկել է քննարկել այն և դրա վերաբերյալ ներկայացնել փորձագիտական կարծիք լրագրողական էթիկայի տեսանկյունից:

1. 2019թ. փետրվարի 22-ին «Ա-ԹիՎի» հեռուստաընկերությունը հեռարձակել է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի հերթական թողարկումը, որի ժամանակ մի խումբ քաղաքացիներ իրենց պահանջներն են ներկայացրել Է. Կիրակոսյանի նկատմամբ:

2. ՏՎԽ-ին ուղղված բողոքի հեղինակը նշում է, որ լրագրող Մերի Աբեղյանի հետ պայմանավորվել է առանց իրեն ձայնագրելու և տեսագրելու ներկայացնել իրավական խնդիրը և փաստերը, սակայն լրագրողը հանդիպման ընթացքում գաղտնի կերպով ձայնագրել է իրեն, իսկ իր հետ եկած օպերատորի *«օգնությամբ նաև տեսագրել է հանդիպումը»*: Նա նաև նշում է, որ

հեռուստաընկերությունը տեսանյութը պարբերաբար հրապարակել է իր կայքում, սակայն դա արել է այնպիսի խմբագրումներով, որ օբյեկտիվ դիտորդի մոտ կարող էր տպավորություն ձևավորվել, թե ինքը կատարել է անօրինություններ, մինչդեռ պատասխանողները այդ տեսանյութերը ներկայացրել են դատարանում որպես փաստական տվյալ՝ ընդդեմ բողոքի հեղինակի։ Նաև հայտնել է, որ իր մոտ տպավորություն է ձևավորվել, որ հեռուստաընկերությունը դա արել է՝ պատասխանողների հետ պայմանավորված, որպեսզի վերջիններիս հնարավորություն ունենան տեսանյութը իր դեմ օգտագործել որպես ապացույց՝ դատական վեճի լուծման նպատակով։

3. 2020թ. նոյեմբերի 13-ին ԴՄ-ն նամակով դիմել է «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի պրոդյուսեր Հրաչ Մուրադյանին (պատճենը՝ «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության տնօրեն Ռուբեն Արամյանին)։

Քանի որ «Ա-ԹիՎի» չի հանդիսանում ինքնակարգավորման նախաձեռնության անդամ, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը, համաձայն իր աշխատակարգի, առաջարկել էր ՀԸ-ին համագործակցել բողոքի քննարկման հարցում և մասնավորապես խնդրել էր պարզաբանել՝ արդյո՞ք կատարվել է գաղտնի նկարահանում, և ի՞նչ միջոցներ է ձեռնարկել հեռուստաընկերությունը խնդիրն անկողմնակալ լուսաբանելու համար։

4. 2020թ. նոյեմբերի 26-ի նամակում «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության տնօրեն
Ռուբեն Արամյանը Դիտորդ մարմնին պատասխանում է. «(…) Քաղաքացի Էմմա Կիրակոսյանը դեռևս 15.01.2019 գրավոր դիմել է «Ա-ԹԻՎԻ» ՍՊԸ-ին իր մասնակցությամբ, իր մեկնաբանությամբ գաղտնի տեսագրությունը չհեռարձակելու պահանջով։ Մեր ընկերության «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի աշխատակազմը քաղաքացու դիմումում նշված ցանկությունը հաշվի առնելով, խնդրո առարկա հանդիսացող Հաղորդաշարից մոնտաժել և հանել է Էմմա Կիրակոսյանին վերաբերվող դրվագները, որի արդյունքում եթեր հեռարձակված հաղորդման ընթացքում բացակայում է քաղաքացի Էմմա Կիրակոսյանի մասնակցությամբ որևէ դրվագ»։

Այնուհետև Ռ. Արամյանը գրում է. «Հեռուստաընկերության կողմից պահպանվել են խնդրի անկողմնակալ, օբյեկտիվ և բարեխիղճ լուսաբանման սկզբունքները, որպիսի փաստը դատական նիստի ընթացքում հաստատվել է նաև Էմմա Կիրակոսյանի կողմից՝ նշելով, որ չի ցանկացել, որպեսզի իր խոսքը հրապարակվի «Կիսաբաց լուսամուտներ» հաղորդաշարի

ընթացքում»։

5. 2020թ. նոյեմբերի 20-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը դիմել է Էմմա Կիրակոսյանին՝ նրան խնդրելով տրամադրել որոշակի ապացույցներ, որ ա) իր և լրագրողի միջև եղել է չձայնագրելու և չտեսագրելու պայմանավորվածություն, բ) կատարվել է գաղտնի տեսա- և ձայնագրություն։

2020թ. դեկտեմբերի 11-ին ԴՄ-ն ստացել է Է. Կիրակոսյանի պատասխան նամակը, որում վերջինս որպես իրեն չձայնագրելու և չտեսագրելու պայմանավորվածության ապացուց բերում է այն հանգամանքը, որ լրագրողի հետ ի վերջո հանդիպել է 14.01.2019թ., ընդունելով հանդիպման մասին լրագրողի բազմաթիվ համառ առաջարկները: «Եթե լրագրողը չընդուներ չձայնագրելու և չտեսագրելու իմ պայմանները, այսինքն՝ մեր միջև չլիներ պայմանավորվածություն, ապա տվյալ դեպքում լրագրողի հետ, բնականաբար, չէի հանդիպի»,- պնդում է նամակի հեղինակը:

Այնուհետև նա գրում է. «Ինչ վերաբերվում է 14.01.2019թ.-ին գաղտնի կատարված տեսա- և ձայնագրությանը, ապա դա ապացուցվում է տվյալ անօրինականությունը կատարելու վերաբերյալ իմ կողմից հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով նույն օրը՝ 14.01.2019թ. ներկայացված դիմումով, որը մուտքագրվել է հանձնաժողովում հաջորդ օրը՝ 15.01.2019թ.-ին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը ներկայացվել է աշխատանքային օրվա վերջում և այդ դիմումի 18.01.2019թ. պատասխանով, ինչպես նաև «Ա-ԹԻՎԻ» հեռուստաընկերության» ՍՊԸ տնօրեն Ռ. Արամյանին հասցեագրված իմ 15.01.2019թ. դիմումով, որին պատասխան մինչ օրս չեմ ստացել»:

6. 2020թ. դեկտեմբերի 11-15-ը ԴՄ-ն անցկացրեց առցանց քննարկումներ։

Բ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. **«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք**

Հոդված 7. Լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի սահմանափակումները

2. Արգելվում է տեսաձայնագրմամբ ստացված տեղեկատվության տարածումը, եթե դա ստացվել է տեսաձայնագրման կատարման մասին առանց անձին զգուշացնելու, և այդ անձն ակնկալել է, որ գտնվում է տեսաձայնագրումը կատարողի տեսադաշտից դուրս, լսելի չէ նրա համար և դրա համար ձեռնարկել է բավարար միջոցներ, բացառությամբ, երբ տեսաձայնագրումը կատարած

անձի տեսադաշտից դուրս լինելու կամ նրա համար լսելի չլինելու համար ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն անբավարար են եղել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված, ինչպես նաև մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

II. **ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 1087.1**

Սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

III. **Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

2.3. խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ և գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի և հիմնավորվի բուն հրապարակման մեջ:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու այն անձանց կամ կազմակերպությունների ներկայացուցիչներին, որոնք իրենց վիրավորված կամ զրպարտված են համարում կոնկրետ հրապարակմամբ, և պատասխանի հնարավորություն ընձեռելու բոլոր նրանց, ում հասցեին քննադատություն կամ մեղադրանքներ են եղել հրապարակումներում:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

արձանագրում է, որ

- հաղորդման ժամանակ խմբագրությունը լուսագրով նշել է, որ փորձել է ստանալ Էմմա Կիրակոսյանի տեսակետը, սակայն վերջինս հրաժարվել է, հետևաբար անկողմնակալ լուսաբանման սկզբունքը չի խախտվել:

- բացման խոսքում հաղորդավարի «Երևանի Արաբկիրի վարչական շրջանի այս տաղավարում հարևաններն ահ ու դողով են սպասում փոստատարի ժամանմանը» արտահայտությունը չի կարող գնահատվել կողմնակալ, որովհետև այն բխում է հաղորդման մասնակիցների վերաբերյալ ներկայացվող նյութերից:

ի գիտություն ընդունելով հանդերձ

- «Ա-ԹիՎի» հեռուստաընկերության պատասխանը, որ հաշվի առնելով Էմմա Կիրակոսյանի դիմումը՝ հաղորդումից հանել են գաղտնի տեսագրության նյութերը, կարծում է, որ հեռուստաընկերության աշխատակցուհին գաղտնի տեսաձայնագրմամբ արդեն իսկ խախտել է տեղեկությունների աղբյուրների հետ պայմանավորվածությունները պահպանելու և նրանց հետ ազնիվ լինելու սկզբունքը: Թեպետ տեսագրված նյութի ցուցադրումից Է. Կիրակոսյանի հորդորով հրաժարվելը որոշ չափով մեղմում է էթիկայի նշված խախտումը, Դիտորդ մարմինն անհրաժեշտ է համարում հեռուստաընկերության կողմից տեսանյութի պարտադիր ոչնչացումը՝ դրա մասին գրավոր հավաստիացնելով Է.Կիրակոսյանին:

Ընդունվել է 2020թ. դեկտեմբերի 15-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի
հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության

գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 61-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007թ. մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015թ. մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: